



*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ*

*ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի
ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ*

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

2022 թվականի հոկտեմբերի 18-ին ժամը 15:00-ին քաղաք Էջմիածին, Մովսես Խորենացի 2 հասցեում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի երկրորդ նիստը, որին մասնակցում էր Վաղարշապատ համայնքի ավագանու 19 անդամ, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը:

Վաղարշապատ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի արտահերթ առաջին նիստին հրավիրված են համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստը վարում է համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Նիստի արձանագրումն ապահովում է աշխատակազմի քարտուղար Գ.Հարությունյանը:

Նիստն սկսվեց Հայաստանի Հանրապետության և համայնքի հիմներով:

Նիստն անցկացվում է առցանց հեռարձակմամբ:

Ավագանու նիստին չներկայացած անդամների բացակայությունը դիտարկվում է անհարգելի՝ վերջիններիս կողմից հարգելիության վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնելու հիմքով:

Նիստը վարողը ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցը և առաջարկեց քննարկել ու հաստատել օրակարգը:

Օրակարգի նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 19 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 19

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Վաղարշապատ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի 2022 թվականի հոկտեմբերի 18-ի երկրորդ նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

1. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

2. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունեց թիվ 143 որոշումը:

Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լուսինե Քալաշյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի 2022թ 3-րդ եռամսյակի բյուջեի կատարման մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամը հերթագրվեց: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունը՝ Ռուբիկ Ենքյանը:

Ռուբիկ Ենքյան: Հողի հարկի կատարողականը վերաբերում է ամբողջ տարվան թե 9-րդ ամսվա դրությամբ է:

Պատասխանեց Լ. Քալաշյան: 9-րդ ամսվա դրությամբ է:

Ռուբիկ Ենքյան: Կապիտալ ծախսերը ինչ նպատակով են ծախսվել, պարտավորությունների թե ընթացիկ տարվա ծախսերի համար: Մեքենայի ձեռքբերումը մտնում է այդ ծախսերի մեջ, թե ոչ:

Պատասխանեց Լ. Քալաշյան: 2022-2023թթ պարտավորությունների մարմանն է ուղղվել, իսկ մեքենայի ձեռքբերումը կարտացոլվի տարեկան հաշվետվության մեջ:

Ռուբիկ Ենքոյան: Խնայողությունները կարող ենք ուղղել այլ ծախսերի. Օրինակ տանիքների վերանորոգման, Սասունցի Դավիթ թաղամասում:

Պատասխանեց Լ. Քալաշյան: Բյուջեի համապատասխան հոդվածում ֆինանս կա, Ձեր կողմից նշված տանիքների նորոգման համար արդեն գնման ընթացակարգը հայտարարված է:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 18 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 18
դեմ – 0
ձեռնպահ – 1

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 144 որոշումը:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Մհեր Մկրտչյանը:

Ներկայացնելով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 19 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 145 որոշումը:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Մհեր Մկրտչյանը:

Ներկայացնելով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 19 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 146 որոշումը:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Մհեր Մկրտչյանը:

Ներկայացնելով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 19 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 147 որոշումը:

Օրակարգի 5-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Մհեր Մկրտչյանը:

Ներկայացնելով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամը հերթագրվեց: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունը՝ Ռուբիկ Ենքոյանը:

Ռուբիկ Ենքոյան: Հողի փոփոխություններ, որ կատարվում են, հետևում ենք դրանց իրականացմանը, այսինքն ջերմոցների կառուցմանը:

Պատասխան Մհեր Մկրտչյան: Այո վերահսկվում է, քանի որ նոր ուղղություն է և մենք տրամադրում ենք շինարարական թույլտվություն, եթե ժամկետում չիրականացվեն աշխատանքները, ապա շինարարական թույլտվությունը ուժը կորցրած կճանաչվի:

Պատասխանեց Լ. Քալաշյան: 9-րդ ամսվա դրությամբ է:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 19 անդամ

Քվեարկության արդյունքները՝	կողմ - 19
	դեմ – 0
	ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 148 որոշումը:

Օրակարգի 6-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Ներկայացնելով ոչ բնակելի տարածքը անհատույց ժամանակավոր օգտագործման իրավունքով տրամադրելու մասին որոշման նախագիծը:

Համայնքի ղեկավարը առաջարկեց պայմանագիր կնքել մեկ տարի ժամկետի փոխարեն երկու տարի ժամկետով:

Ռուբիկ Ենքոյանը առաջարկեց կետ ավելացնել, եթե պայմանագրի ժամկետից ավարտից հետո ծրագրեր չլինեն շենքի հետ կապված, ապա ևս մեկ տարով երկարացնել:

Համայնքի ղեկավարը հայտնեց, որ նման կետ արդեն իսկ օրենքով սահմանված է:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 19 անդամ

Քվեարկության արդյունքները՝	կողմ - 19
	դեմ – 0
	ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց ձայների միծամասնությամբ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 149 որոշումը:

Օրակարգի 7-րդ հարցի առթիվ՝ համայնքի ղեկավարը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական երրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 19 անդամ

Քվեարկության արդյունքները՝	կողմ - 19
	դեմ – 0
	ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 144 որոշումը:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված: